ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«08» փետրվար 2023թ. N ՄՈ/50 -Ա

ք. Արմավիր

«ՓԱՐԱՔԱՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲՆԱԿԱՆՈՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արամվիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2023 թվականի փետրվարի 3-ի N 351 գրությունը, «Փարաքարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատանքները կազմակերպելու նպատակով.

որոշում եմ՝

1. Մինչև «Փարաքարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության նոր դպրոցական շենքի կառուցման աշխատանքների ավարտը «Փարաքարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության՝

1) 1-9-րդ դասարանների աշակերտների հանրակրթական ծրագրերով բնականոն ուսուցման երկրորդ հերթով կազմակերպումն իրականացնել «Թաիրովի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով բնակավայրի Ե. Չարենց փողոցի թիվ 2 հասցեում գտնվող վարչական շենքում.

2) 10-12-րդ դասարանների աշակերտների հանրակրթական ծրագրերով բնականոն ուսուցման առաջին հերթով կազմակերպումն իրականացնել Փարաքարի «Հովիկ Էդգարյանի անվան արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով

ամրացված՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար բնակավայրի Այգեստան փողոցի թիվ 33 հասցեում գտնվող վարչական շենքում:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը, քաղաքաշինության վարչությանը և ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (վարչությունների պետեր՝ Ս. Բուդաղյան, Ա. Հովհաննիսյան և Վ. Մկրտչյան)՝ ապահովել սույն որոշման կատարումը:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը (պետ՝ Ս. Բուդաղյան)՝ սույն որոշման աշխատանքներին մասնակից դարձնել «Թաիրովի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մ. Բաղումյանին, «Փարաքարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Հակոբյանին, «Թաիրովի միջնակարգ դպրոց» և «Փարաքարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաշվապահներին և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավար Դ. Մինասյանին (համաձայնությամբ):
4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ Ա. Ավետիսյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

08.02.2023

X

VERIFIED OCSP 08.02.2023 11:16:28 GMT+4

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ՄԱՐԶՊԵՏ՝ **Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**